ՎԴ/3255/05/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 սեպտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Նունե Արաբաչյանի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի (այսուհետ՝ նաև Հանրային վերահսկողության խորհուրդ)՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/3255/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 21-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Նունե Արաբաչյանը 2023 թվականի ապրիլի 25-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հանրային վերահսկողության խորհրդի՝ պահանջելով պարտավորեցնել պատասխանողին կայացնել հայցվորի վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ, այն է՝ բավարարել հայցվորի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի՝ ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքի պահանջը:

2. ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի մայիսի 4-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է՝ առաջարկելով հայցվորին դատարան ներկայացնել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշումը և նույն որոշման դեմ ներկայացված բողոքի մերժումն անվավեր ճանաչելու մասին պահանջ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված՝ վիճարկման հայցին համապատասխան:

3. Նունե Արաբաչյանը 2023 թվականի մայիսի 22-ին կրկին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հանրային վերահսկողության խորհրդի՝ պահանջելով հայցվորի մասով անվավեր ճանաչել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշումը և հիշյալ որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունը:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 26-ի որոշմամբ Նունե Արաբաչյանի կողմից ներկայացված հայցադիմումը՝ Հանրային վերահսկողության խորհրդի՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ընդունվել է վարույթ, իսկ մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

5. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

7. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի օգոստոսի 30-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 2-րդ մասին, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/0830/05/14 գործով 2016 թվականի ապրիլի 22-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Հ]այցվորի պահանջը վերաբերում է «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 20.01.2023 թվականի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելուն, մինչդեռ, Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհուրդը, հանդիսանալով ՀՀ ֆինանսների նախարարությանը կից ստեղծված և հասարակական հիմունքներով գործող սուբյեկտ, չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, իսկ ակտի վիճարկմամբ հայցվորը նպատակ է հետապնդում վերականգնել 20.01.2023 թվականի թիվ 1-Ա որոշմամբ դադարեցված ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանն անդամակցությունը՝ Դատարանը փաստում է, որ այդ պայմաններում վեճը հանդիսանում է մասնավոր հարաբերությունների շրջանակում ծագած, ուստի հայցն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանի քննությանը, քանի որ իրավահարաբերությունը չի համապատասխանում հանրային իրավահարաբերությունների հատկանիշներին՝ սուբյեկտի, բովանդակության և օբյեկտի առումներով, որպիսի հանգամանքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի ուժով, հիմք է հանդիսանում հայցադիմումն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրելու համար»* [1]:

9. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ և 20-րդ կետերին, 4-րդ

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 87-89:

հոդվածի 1-ին մասին, 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերին, 4-րդ հոդվածին, 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին, 7-րդ հոդվածի 1-ին մասին, 15-րդ հոդվածին, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 2-րդ կետի «ե» ենթակետին, 20-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերին, 34-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ին թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած դիրքորոշումներին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացրած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ գտել է, որ *«(…) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ նույն որոշմամբ վկայակոչած նորմերի համաձայն՝ մասնագիտացած կառույցը ստեղծված լինելով օրենքի հիման վրա իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթներ, այդ թվում՝ պալիս է փորձագետ հաշվապահի և աուդիտորի որակավորումը, ընդունում է որոշումներ որակավորման չեղարկման վերաբերյալ, հաստատում է աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների ծրագիրը, որակավորման քննությունների անցկացման կարգը:*

Հանրային վերահսկողության խորհուրդը, ստեղծված լինելով օրենքի հիման վոա իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթներ, այդ թվում՝ ընդունում է որոշումներ որակավորման չեղարկման վերաբերյալ, համաձայնություն է տալիս մասնագիտական կառույցի կողմից հաստատած աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների ծրագրին, որակավորման քննությունների անցկացման կարգին, բողոքի հիման վրա վերանայում է մասնագիտացած կառույցի որակավորման չեղարկման վերաբերյալ որոշումները:

Փորձագետ հաշվապահի և աուդիտորի որակավորում տալու առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պայմանավորում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փորձագետ հաշվապահի և աուդիտորի որակավորում տալը լիազորում են բացառապես մասնագիտացած կառույցին, իսկ մասնագիտացած կառույցի համապատասխան որոշումների վերանայումը՝ Հանրային վերահսկողության խորհրդին: Այսինքն, մասնագիտացած կառույցը և Հանրային վերահսկողության խորհուրդը քննարկվող հարաբերություններում հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Մասնագիտացած կառույց կամ Հանրային վերահսկողության խորհուրդ – փորձագետ հաշվապահի կամ աուդիտորի հարաբերությունները բնորոշվում են նաև ցանկացած մասնավոր, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող գործարքի (պայմանագրի) բացակայությամբ: Մասնագիտացած կառույցի կողմից որակավորում տալու կամ որակավորման չեղարկման որոշումը, Հանրային վերահսկողության խորհրդի կողմից մասնագիտացած կառույցի որոշումների վերանայումը կայացվում է Մասնագիտացած կառույցի և Հանրային վերահսկողության խորհրդի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փորձագետ հաշվապահի կամ աուդիտորի համար: Հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք: Ուստի, փորձագետ հաշվապահի կամ աուդիտորի որակավորում տալու կամ որակավորման չեղարկման որոշումը վիճարկելու հայցերի նկատմամբ ևս կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված (վիճարկման հայցերին վերաբերող) իրավական նորմերը»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 107-112:

ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հեռևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3255/05/23 գործն ըստ հայցի՝ Նունե Արաբաչյանի ընդդեմ Հանրային վերահսկողության խորհրդի՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

11. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

12. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0830/05/14 որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

13. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն*

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշխկյանի քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»[4]*:*

---

4 Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշխկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշխկյանի* թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

14. «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«[Ն]ույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության հետ կապված հարաբերությունները»:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը (այսուհետ՝ քաղաքականություն իրականացնող մարմին) ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի»:*

Նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի գործողության ոլորտի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինը Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհուրդն է (այսուհետ՝ Հանրային վերահսկողության խորհուրդ):*

2. *«Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինը Հանրային վերահսկողության խորհուրդն է»:*

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանրային վերահսկողության խորհուրդը հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնելու նպատակով սույն օրենքի համաձայն՝ ֆինանսների նախարարությանը կից ստեղծված մարմին է:*

2. Հանրային վերահսկողության խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով»:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանրային վերահսկողության խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ նախագահ, նախագահի*

փեղակալ և հինգ անդամ: Խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամներին, այդ թվում նախագահին և նախագահի փեղակալին նշանակում է ֆինանսների նախարարը՝ հետևյալ կառույցների ներկայացմամբ.

1) ֆինանսների նախարարություն՝ երեք անդամ.

2) Կենտրոնական բանկ՝ երկու անդամ.

3) էկոնոմիկայի նախարարություն՝ մեկ անդամ.

4) պետական եկամուտների կոմիտե՝ մեկ անդամ: (...)»:

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Մասնագիտացված կառույցը քաղաքականություն իրականացնող մարմնի հավատարմագրած աուդիտորների, փորձագետ հաշվապահների, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների (այսուհետ՝ մասնագիտացված կառույցի անդամ) անդամության հիման վրա գործող հասարակական կազմակերպություն է: Մասնագիտացված կառույցն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:*

2. Մասնագիտացված կառույցը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և իր անդամների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:

3. Աուդիտորը, փորձագետ հաշվապահը և աուդիտորական կազմակերպությունը կարող են անդամակցել միայն մեկ մասնագիտացված կառույցի»:

Հիշյալ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի «ե» ենթակետի համաձայն՝ *«Մասնագիտացված կառույցն իրականացնում է հետևյալ գործառույթները.*

1) հաստատում է իր անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգը.

2) աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթացի հետ կապված՝

ե. տալիս է իր կողմից որակավորված աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում և ընդունում է որոշումներ որակավորման չեղարկման վերաբերյալ»:

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Անդամակցության դադարեցման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ դադարեցման վերաբերյալ մասնագիտացված կառույցի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում»:*

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.*

*1) **աուդիտոր**՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով սահմանված՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի աուդիտորի որակավորում. (...)*

*9) **մասնագիտացված կառույց**՝ ըստ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի սահմանման»:*

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի»:*

Նշված օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Աուդիտորի որակավորումը (այսուհետ՝ նաև որակավորում) սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ աուդիտորի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի՝ (այսուհետ՝ դիմող) սույն հոդվածի 2-րդ մասի պահանջները բավարարելու հավաստումն է»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Որակավորումը տալիս է մասնագիտացված կառույցը: (...)»*

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. (...)*

*17) **փորձագետ հաշվապահի**՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի փորձագետ հաշվապահի որակավորում. (...)*

*20) **մասնագիտացված կառույց**՝ ըստ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի սահմանման»:*

Նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը (այսուհետ՝ քաղաքականություն իրականացնող մարմին) ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի»:*

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Փորձագետ հաշվապահի որակավորումը (այսուհետ՝ նաև որակավորում) սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող)՝ սույն հոդվածի 2-րդ մասի պահանջների բավարարման հավաստումն է»:*

Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Որակավորումը տալիս է մասնագիտացված կառույցը (...)»*

15. Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը ՀՀ ֆինանսների նախարարությունն է, որին կից գործող Հանրային վերահսկողության խորհուրդը հանրային վերահսկողության գործառույթներ է իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի գործողության ոլորտի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման կարգավորման նկատմամբ: Այսպես՝ Հանրային վերահսկողության խորհուրդը օրենքով նախատեսված կառույցների ներկայացմամբ կազմված հասարակական հիմունքներով գործող մարմին է, որն իրականացնում է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բնագավառների նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթներ:

Հանրային վերահսկողության խորհուրդը, ի թիվս այլնի, իրականացնում է նաև վերահսկողություն՝ մասնագիտացված կառույցի գործառույթների նկատմամբ, որը աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման գործընթացի հետ կապված տալիս է իր կողմից որակավորված աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում և ընդունում է որոշումներ՝ որակավորման չեղարկման վերաբերյալ: Ընդ որում, մասնագիտացված կառույցի համապատասխան որոշումները ենթակա են վերանայման միայն Հանրային վերահսկողության խորհրդի կողմից:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ Հանրային վերահսկողության խորհուրդը հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին է, որը վերանայելով մասնագիտացված խորհրդի որոշումները, իրականացնում է իր հանրային իշխանական լիազորությունները, որոնք ուղղված են հանրային շահի իրացմանը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողության իրականացմանը:

16. Սույն վարչական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Նունե Արաբաչյանը 2023 թվականի մայիսի 22-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հանրային վերահսկողության խորհրդի՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշումը և հիշյալ որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին[5], որը Հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով ընդունվել է վարույթ, իսկ մնացած մասով՝ մերժվել է[6],

- ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ

[5] Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհուրդը, հանդիսանալով ՀՀ ֆինանսների նախարարությանը կից ստեղծված և հասարակական հիմունքներով գործող սուբյեկտ, չի հանդիսանում հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, իսկ ակտի վիճարկմամբ հայցվորը նպատակ է հետապնդում վերականգնել 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշմամբ դադարեցված՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությանն անդամակցությունը, ուստի հայցվորի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[7],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական չեն, և սույն դեպքում մասնագիտացած կառույցը և Հանրային վերահսկողության խորհուրդը քննարկվող հարաբերություններում հանդես են գալիս որպես հանրային իշխանության կրող[8]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Նունե Արաբաչյանի և Հանրային վերահսկողության խորհրդի միջև ծագած վեճը վերաբերում է Հանրային վերահսկողության խորհրդի կողմից իր իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում կայացված՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի՝ ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին թիվ 02/3-1/3775/2023 գրության իրավաչափությանը, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

18. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մասին, որ թիվ ՎԴ/3255/05/23 գործն ըստ հայցի՝ Նունե Արաբաչյանի ընդդեմ Հանրային վերահսկողության խորհրդի՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

19. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Նունե Արաբաչյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/3255/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/3255/05/23 գործն ըստ հայցի՝ Նունե Արաբաչյանի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության մի շարք անդամների անդամակցությունը դադարեցնելու մասին» 2023 թվականի հունվարի 20-ի թիվ 1-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի թիվ 02/3-1/3775/2023 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ